«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Կատարող՝ Ա.Վ.ՄԽՈՅԱՆ
Ղեկավար՝ Ե.Պ.ՏՈՆՈՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____ 3

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ: ԶԻՆՎՈՐԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ _____ 4

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր պետության զարգացման ողջ ընթացքում աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության նկատմամբ հոգատարությունը գրավել է առաջնային տեղ:

Երիտասարդության գաղափարական դաստիարակության բաղադրիչներից է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է երկրի պաշտպանունակության հետագա ամրապնդման, ազգային բանակի մարտունակության բարձրացմամբ:

Բանակ- հասարակություն փոխադարձ կապի ամրապնդման գործում նշանակալի դերակատարություն ունեն մեր հանրապետությունում գործող հասարակական և պետական կազմակերպությունները ... Իզուր չէ ասված «Այնտեղ, որտեղ բանակն ու ժողովուրդը միասնական են, այնտեղ հայրենիքն անպարտելի է»... Թեկուզ տարբեր ծանրություն ունեն մեր պարտականությունները, սակայն պատասխանատվության առումով բոլորս հավասար ենք, որովհետև այն առաջին հերթին վերաբերում է հայրենիքի անվտանգությանը: Իսկ սրանք սոսկ բառեր չեն, այլ գործողության ուղենիշ, որի շնորհիվ մեծ առաջընթաց է նկատվել բանակ հասարակություն կապի ամրապնդման բնագավառում: Զինվորական դաստիարակության կողմերից մեկն է հայրենասիրական դաստիարակությունը, որի կարևոր օղակներնն են ընտանիքը, հանրակրթական դպրոցները, բուհերը և այլն:

Մանկավարժական փորձը և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախազորակոչային ու զորակոչային տարիքի երիտասարդության, հայրենասիրության, ռազմամարտական դաստիարակությունը պայմանավորված է նրանց մեջ բարոյական բարձր հատկանիշների, ազգային բանակում ծառայելու պատրաստակամության զարգացմամբ:

Ուստի, արդի հայոց կրթական համակարգը անպայմանորեն պետք է անդրադառնա անցյալի գիտական մտքի նվաճումներին՝ ապագան հասանելի դարձնելու նպատակով:

Այլ կերպ ասած պատրաստել ֆիզիկապես ուժեղ և դիմացկուն տարբեր զենքեր օգտագործելու ունակ երիտասարդներ:

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մանկավարժական պայմանների բարելավման արդյունավետությունը

Ամենից առաջնային ենթադրությունն է ուսուցման և կրթության միջոցով մարդուն զինել դարերով կուտակված գիտական իմացությամբ, դրա հիման վրա նրա մեջ պատվաստել արդյունավետ գործնեության ընդհանուր, ինչպես և մասնագիտական ընդունակություններ, հմտություններ, ըստ ամենայնի նրանց մեջ ձևավորել գիտական աշխարահայացք, հոգևոր-բարոյական և զգացմունքային աշխարհի համոզմունքներ, ըմբռնումներ, հասարակական հաղորդակցման ու վարքի առողջ սովորույթներ:

Մարդու մանկավարժական դաստիարակության վերջնարդյունքի վրա մեծապես ներգործում է նաև յուրաքանչյուրի անհատականությունը: Այլ կերպ ասած՝ լիարժեք դաստիարակության ընթացքում ներդաշնակորեն լուծվելու են ոչ միայն ուսուցողական, դաստիարակչական, այլև զարգացողական խնդիրները ձևավորվելու է ինքնատիրապետման, անհատականության տեր մարդ, քաղաքացի և մասնագետ:

Մանկավարժական դաստիարակությունն օգնում է քննադատաբար յուրացնել անցյալի փորձը, իր ստեղծագերծական գործնեությամբ հարստացնել մարդկության նյութական և հոգևոր արժեքները և շարունակել կյանք իհաղթարշավը մեր մոլորակի վրա:

Բնականաբար, մարդու ձեռք բերած գիտելիքները կարողություններն ու հմտությունները, նրա ստեղծագործական պոտենցիալը ամենից առաջ ծառայում են իր ժամանակաշրջանի, իր ժողովրդի ու հայրենիքի պահանջներին:

Հայ մանկավարժության առաջնակարգ խնդիրներից է շարունակական կրթությունը բոլոր օղակների վերակառուցում՝ ազգային դաստիարակության համամարդկային սկզբունքներին ու գաղափարներին համապատասխան:

Մեր ազգային դաստիարակության ձեռք է բերվելու ոչ միայն աճող սերնդի կրթությունը մայրենի լեզվով իրագործելով, այլև համամարդկային արժեքներին զուգընթաց ազգային նպատակամղվածության, մշակույթի, ավանդույթների ու սովորույթների պատմության, մշակույթի, ավանդույթների ու սովորույթների յուրացմամբ, կարճ ասած ազգային ոգու, մտածելակերպի, հոգեբանության, վարք ու բարքի արմատավորմամբ, ինչպես նաև յուաքանչյուր հայորդու ինքնատիպ ու առանձնահատկության դաստիարակմամբ:

Հայ ժողովրդի նոր սերունդները պետք է պատրաստ և ունակ լինեն լուծելու մեր հայրենիքի վերածննդի համար անհրաժեշտ տնտեսական, գիտատեխնիկական,

մշակույթային բոլոր տեսակի առաջադրանքները:

Այս գերագույն նպատակը կենսագործելու համար հայ մանկավարժությունը հիմնավորապես և բազմակողմանիորեն ուսումնասիրելու է ինչպես սեփական, այնպես էլ համեմատական մանկավարժության արդիական փորձը, անցյալի առաջավոր մանկավարժական ժառանգությունը, կրթությունն ու դաստիարակությունը հարակից գիտությունների նորագույն նվաճումները, մշակելու համամարդկային արժեքներից ու հիմնարար գիտություններից ծնված ընդհանուր և առարկայական, գիտական նոր մեթոդաբանության, կատարելագործելու ,ինչպես իր գիտահետազոտական մեթոդները, այնպես էլ տարբեր կրթօջախներում կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաներն ու տեխնիկան, հումանիստացնելու և ժողովրդավարեցնելու, աճող սերնդի կրթության ու դաստիարակության ողջ գործընթացը:

Դաստիարակությունը ծագել է մարդկային ցեղի հանդես գալու հետ մեկտեղ և կգոյատևի նրա հետ հավերժորեն:

Նախնադարյան համայնական հասարակարգում դաստիարակությունը կազմել է տոհմի, ավագ սերնդի փորձի փոխանցումը կրտսեր սերնդին: Որսորդները, հողագործները, արհեստագործները և այլ բնույթի աշխատանք կատարողներն իրենց ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները փոխանցում էին կրտսերներին՝ նրանց մասնակից դարձնելով իրենց աշխատանքներին:

Մարդը և՝բնության, և՝ հասարակության ծնունդ է: Նրա ֆիզիկական ու հոգևոր զարգացումն իրագործվում է ինչպես բնական ու նյութական գործոնների, այնպես էլ հասարակական գործոնների ազդեցությամբ: Մարդը հասարակության լիարժեք էակ է դառնում, երբ աղբյուրներից ստանում է ուսուցում, մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային և ուրիշ բնույթի նպատակամետ դաստիարակություն, զարգացնում է ոչ միայն իր ընդհանուր, այլև հատուկ ունակությունները, այլ կերպ ասած՝ ձևավորվում է որպես անձնավորություն, քաղաքացի, մասնագետ և անհատականություն:

Համալիր մոտեցում պահանջող այս ամբողջ բազմամարդ գործընթացն անվանում ենք դաստիարակություն լայն իմաստով:

Կյանքում մարդիկ, ավելի հաճախ երիտասարդները, երբեմն շեղվում են հասարակական համակցության ընդունված կանոններից և թույլ են տալիս զանցանքներ, երբեմն էլ հանցանքներ:

Այսպիսի դեպքում ընտանիքի անդամները կրթօջախների աշխատողները, հասարակությունը, պետությունը զբաղվում են զանցառուի կամ հանցագործի վերադաստիարակությամբ:

Դաստիարակության գործընթացում արդյունքներն ուղղակիորեն կախում ունեն դաստիարակության տարբեր եղանակների, ձևերի ու մեթոդների ներդաշնակ և ճկուն կիրառումից, դաստիարակվողի տարիքային, անհատական և այլ առանձնահատկությունների հաշվառումից: Մանկավարժության ընդհանուր հասկացություններից են նաև կրթությունը, ինքնակրթությունը, ուսուցումը, ինքնաուսուցումն ու զարգացումը:

Դաստիարակության գործընթացն իր բոլոր բաղադրամասերով կարող է ընթանալ կազմակերպված, նպատակամետ, երբ այն իրագործվում է առկա /ստացիոնար /կրթօջախներում, կրթված ընտանիքներում ու միջավայրում: Սակայն դաստիարակությունը կարող է ընթանալ ոչ կազմակերպված, տարերայնորեն, երբ այն իրագործվում է ոչ նպատակամետ միջավայրի տարերային ազդեցության (հաճախ բարոյական) ներքո և կարող է ավելի զորավոր ազդեցություն ունենալ սովորողների վրա:

Այդ պատճառով հատկապես դպրոցական տարիքի երեխաները պետք է գտնվեն ավագների, դպրոցական կոլեկտիվների, արտադպրոցական հիմնարկների հսկողության ներքո, և նրանց գործունեությունը պետք է ապահովի բարոյապես շիտակ և հասարակ, շնորհեն օգտակար ուղղվածություն, ըստ ամենայնի ճիշտ կազմակերպվի նրանց ինքնակառավարումը, ստեղծագործական կարողությունների ինքնահաստատումը:

Ուսուցումն ու կրթության իրականացումը այն կոնկրետ գործընթացն է, որն իրականացվում է սովորող-սովորեցնող երկողմանի անմիջական կապի միջոցով:
Կրթության գործընթացը ներառում է երկու սերունդների փոխկապակցված բաղադրամասեր. Առաջին՝, երբ ուսուցիը ուսուցանում է, երկրորդ՝ երբ աշակերտը սովորում է ուսում, գիտելիք ձեռք բերեում:
Ինքնաուսուցումը՝ կենսագործունեության նույն այդ կոնկրետ գործընթացն է, որտեղ, սակայն թե՝սովորեցնողիև թե՝սովորողի դերը կատարում է ինքը սովորողը:
Զարգացումը ոչ միայն մանկավարժական, այլև հոգեբանական ընդհանուր հասկացություն է: Այն ենթադրում է մարդու թե՝ ֆիզիկական, թե՝ հոգևոր ու բարորյական զարգացում, որն իրականացվում է ինչպես ներքին օրենքների, այնպես էլ ուսուցման ու դաստիարակության հետ ներդաշնակ ու փոխկապակցված ձևով և դրանց ազդեցությանն երքո:

Լայն իմաստով դաստիարակության գործընթացի բոլոր բաղադրամասերի գործունեությունը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է գաղափար ունենալ ու դրա հիմնական օրինաչափությունների վերաբերյալ, որոնք բխում են դաստիարակության գործի բոլոր բաղադրամասերի դիալեկտիկական փոխկապակցությունից:

Դրանք են՝

1.Դաստիարակության համամարդկային արժեքները, ժողովրդավարական, մարդասիրական ու համազգային տաղավարները

2.Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորող բովանդակության և տեխնոլոգիայի համապատասխանատվության աստիճանը, այսինքն՝

ա) որքան ճիշտ են ընտրված դաստիարակության (լայն իմաստով) և կոնկրետ նպատակներն ու խնդիրները, սկզբունքներն ու ձևերը, մեթոդները, հնարներն ու միջոցները, բարոյահոգեբանական, գեղագիտական, նյութական, հիգիենիկ և այլ պայմանները, այնքան բարձր են դաստիարակության արժեքները:

բ) որքան ամուր և օրգանական են ուսուցման, կրթության, դաստիարակության և զարգացման կապերը, այնքան բարձր է դաստիարակության արդյունավետությունը

գ) որքան միասնական են ու նպատակամետ են մանկավարժների և սովորողների ուսուցողական, ուսումնառական, գործողությունները, դաստիարակության, ինքնադաստիարակության, մանկավարժական կառավարման ու սովորողների ինքնակառավարման գործընթացները, այնքան բարձր են մանկավարժական ողջ գործընթացի արդյունքները

դ) ինչպիսին, որ սովորողների տարիքային, սեռային, անհատական և այլ առանձնահատկություններն են, նրանց ընդհանուր, առարկայական զարգացման մակարդակներն են, այնպիսին էլ նրանց դաստիարակության արդյունքներն են

ե) ուսուցման գործընթացում սերտորեն կապված են ուսուցչի աշխատանքը սովորողների ուսման հետ, ուսուցման և ուսումնառության խնդիրները՝ հասարակական այլ պահանջմունքների և սովորողների ուսումնական հնարավորությունների հետ:

Այսպիսով, մանկավարժական գործընթացում բարձր արդյունքների հասնելու գլխավոր նախապայմանը նրա բոլոր բաղադրամասերի նկատմամբ դիալեկտիկական համակարգված և համագործակցային մոտեցումն է:

Յուրաքանչյուր երկրում դաստիարակության նպատակը (լայն իմաստով) պետք է

լինի ոչ միայն համամարդկային արժեքների, դարերով կատարված ճանաչողական փորձի փոխանցումը, երիտասարդ սերնդին, այլ այն ազգային գաղափարա-խոսության և հոգեբանության սերմանումը մարդասեր, ժողորդավար, այլասեր և ազգային բարձր արժանապատվության տեր վառ անհատականությունների դաստիարակումը:

Ազգային դաստիարակության հարցում գոյություն ունի երկու իրարամերժ սկզբունք. ազգային ինքնատիրապետություն և ազգային բացառիկություն:

Մեր ժամանակներում դաստիարակության հիմնադրույթներից մեկը պետք է լինի ազգային ինքնատիրապետության սկզբունքը, որն ի տարբերություն ազգային բացառիկության մտածողության, մերժում է ազգայնամոլության ամենափոքր իսկ դրսևորումը և հենվում է այլ ժողովուրդների ազգային արժեքների ու արժանա-պատվության ճանաչման գիտակցության վրա:

Հայ ժողովուրդը պատմական զարգացման ընթացքում ստեղծել է իր ազգային գաղափարախոսության և հոգեբանության, բնավորության ինքնատիպ գծերի մի համակարգ, որով այսօր պետք է օգտվի դաստիարակության բնագավառը: Արտացոլվել են հայ մարդու իդեալական կապերը ներկայացնող հատկություններ՝սեր և հարգանք աշխատանքի նկատմամբ, խաղաղասիրություն, այլասիրություն (ազատամիտ), հայրենասիրություն, զգացմունքայնություն, բնական մտածո-ղություն, արդարության զգացում, գթասրտություն, գործարար հատկանիշներ, բարեգործություն, հնարամտություն և այլն: Ահա ինքնատիպ հատկանիշների ոչ լրիվ ցանկը, որը պետք է ուղենիշ դառնա ժամանակակից հայեցի դաստիարակության ոլորտում:

Ժամանակակից հասարակական կյանքը լրջագույն պահանջներ է ներկայացնում հանրակրթական ոլորտի նոր սերնդի դաստիարակության և ուսուցման խնդիրների լուծման առումով: Պետությանն անհրաժեշտ է առողջ, ուժեղ, նախաձեռնող, կարգապահ, գրագետ երիտասարդներ, ովքեր պատրաստ կլինեն սովորել, աշխատել հանուն իրեն հենց իր անձի, իր ընտանիքի բարօրության, իսկ անհրաժեշտության դեպքում սատար կանգնել նրանց պաշտպանությանը:

Հանրակրթության առաջնահերթ խնդիրների շարքում կարևոր դեր ունի սովորողների հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ու զարգացումը:

Հայրենասիրական դաստիարակությունն անց է կացվում երեք փուլերով.

1.նախազորակոչային տարիքում

2.զինվորական ծառայության ժամանակ

3.պահեստազորային հաշվառման ընթացքում

Նախազորակոչային տարիքի հայ երիդասարդության դաստիարակության խնդիրների համակարգում ռազմահայրենասիրական դաստիարակությունը զբաղեցնում է առանձնահատուկ, առաջնակարգ տեղ: Թերևս դրանով պայմանավորված է ՀՀ առանձնահատուկ աշխարհաքաղաքական դիրքը և իրավիճակը: Հայրենասիրական, գաղափարական դաստիարակությունը յուրատեսակ գործընթաց է: Այն պետք է սկսել դեռևս ընտանիքից, մանկապարտեզից, այնուհետ շարունակել դպրոցներում: Մատաղ սերնդի մեջ պետք է ամրապնդել զինվորականի՝ հայրենիքի, ազգի, պետականության պաշտպանի կերպարի պատվաբեր լինելու գաղափարը՝ նույնացնելով այն իր մեջ առնականություն, քաջություն, արժանապատվություն մարմնացնող սիմվոլիկ կերպարների հետ: Չէ, որ քաջությունը, բնավորության կայունությունը, ֆիզիկական դիմացկանությունը անհրաժեշտ են ինչպես հայրենիքի, պաշտպանին, այնպես էլ բժշկին, ինժեներին, մանկավարժին:

Որպես կանոն, ռազմահայրենասիրական դաստիարակությունը հանրակրթական դպրոցում իրականացվում է համակարգված երեք ուղղություններով.

1) Դաստիրակություն՝ խարսխված ժողովրդի և զինված ուժերի մարտունակության վրա:

2) Ռազմավարական խաղեր:

3) Համագործակցություն դպրոցական և զինվորական կոլեկտիվների, մասնավորապես դպրոցի և զորամասերի, տարածքային զինվորական կոմիսարիատների շրջանակներում:

«Դաստիարակությունը ժողովրդի և զինված ուժերի մարտական ավանդույթների հիման վրա» առաջին ուղղությունն իր մեջ ընդգրկում է հետևյալ միջոցառումները

-Միջոցառումներ, որոնք ուղղված են հայրենիքի անկախության համար իրենց կյանքը զոհաբերած քաղաքացիների և զինծառայողների հիշատակը անմահացնելուն:

-Հիշատակի օրերի տոնում, ցուցահանդեսների, մրցույթների անցկացում, տեսաֆիլմերի դիտում:

-Ռազմահայրենասիրական երգի մրցույթի կազմակերպում:

Երկրորդ ուղղությունը ենթադրում է գործնական կարողությունների ձևավորում, որը հնարավոր է «Դպրոց-բանակ» համագործակցության միջոցով:

Խաղերը նպաստում են սովորողների ֆիզիկական և կամային որակների զարգացմանը, աշակերտական կոլեկտիվի համախմբմանը, համատեղ գործողությունների համար անհրաժեշտ հմտությունների հասարակական

ակտիվության խթանմանը: Ռազմական գիտելիքների ուսուցման և նախնական զինվորական պատրաստման լավագույն ձև է համայնքային, մարզային և հանրապետական խաղ-մրցույթների անցկացումը դպրոցների միջև;

«Դպրոցական և զինվորական կոլեկտիվների համագործակցություն» ուղղությամբ աշխատանքը իրականացվում է ռազմակիրառական խմբակների և սեկցիաների ղեկավարման, ռազմական ճամբարների և ռազմադաշտային հավաքների համատեղ կազմակերպման, զորամասեր աշակերտների այցելությունների միջոցով:

Արտադասարանական և արտադպրոցական նշված միջոցառումների դերը չթերագնահատելով՝ նշենք, որ ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման կարևորագույն միջոցը դասն է: Նախնական զինվորական պատրաստության դասարանը դպրոցում հայրենասիրական աշխատանքի դաստիարակչական կենտրոնն է, ինչը հնարավորություն է տալիս համակարգել այդ աշխատանքները, ձևավորել դրական սովորույթներ: Նախնական զինվորական պատրաստության դասարանի բազայի վրա իրականացվում են.

- Պատմության, գրականության և այլ առարկաների դասաժամեր հայրենասիրական ուղղվածության թեմաներով:
- Դպրոցականների հանդիպումները զինծառայողների, վետերանների հետ:
- Արիության դասեր, երեկոներ, հավաքներ, զրույցներ, արտադասարանական ժամեր, տեսաֆիլմերի դիտում, ռազմակիրառական խմբակների պարապմունքներ:

Հանրակրթական դպրոցներն ահռելի անելիքներ ունեն հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: Դրանցից ամենահիմնականը ռազմական կրրթության, պատմության, աշխարհագրության ու գրականության դասերի մեջ խնդրո առարկայի առումով նպատակաուղղված գործունեության ծավալումն է:

Նախազորակոչային տարիքի պատանիների զինվորական ծառաության հոգեբանական պատրաստակամությունը պետք է դիտարկել, որպես հայրենասիրական դաստիարակության կարևորագույն խնդիր:

Ռազմագիտության դասերին, ռազմագիտական գիտելիքներ հաղորդելուն զուգահեռ, պետք է աշակերտներին տեղեկություն տրվի զինվորական ծառայության վերաբերյալ, թե ինչ օբեկտիվ հանգամանքներ կան բանակում, որոնց պետք է հարմարվի նորակոչիկը: Անհրաժեշտ է մոդելավորել կոնկրետ իրավիճակներ և ներկայացնել դրանք աշակերտներին, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում, հանդիպելով նման իրավիճակների, նրանք կարողանան ճիշտ կողմնորոշվել և համապատասխան վարքագիծ դրսևորել:

Հայրենասիրական դաստիարակությունը պետք է դարձնել պետական անկախ համակարգ: Բոլոր հանրակրթական կրթօջախներում նպատակահարմարություն լինի, որպեսզի գործեն պատանիների նախազորակոչային պատրաստության(ՊՆՊ) համալիրները:

Զորակոչն ու դեռահասների, պատանիների նախազորակոչային պատրաստության գործընթացը, համարվում են համապետական ամենա-կարևորագույն միջոցառումներ: Օրենսդրական կազմակերպչական տեսանկյունից դրանք իրականացվում են բավականին արդյունավետ, այսօր կարող ենք փաստել, որ զորակոչի գործընթացը դարձել է ամենաթափանցիկ, ամենաօբյեկտիվ համապետական միջոցառումը: Այստեղ կարևորվում են օրենքի գերակցության, սոցիալական արդարության սկզբունքները: Սակայն կարող ենք նաև փաստել, որ դեռևս ոչ կատարյալ կարելի է համարել նախազորակոչային պատրաստության գործընթացը:

Ավագ դպրոցականների նախազորակոչային պատրաստությունը բազմամակարդակ, բազմապլանային գործընթաց է: Ավագ դպրոցի սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական խնդիրների իրագործումը ենթադրում է համագործակցություն այն բոլոր պետական և հասարակական կառույցների միջև, որոնք հնարավոր կդարձնեն հետևյալ խնդիրների լուծումը.

ա/ ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական և քաղաքացիական դաստիարակության բնագավառում պետական քաղաքականության իրականացման գործում յուրաքանչյուր քաղաքացու մասնակցություն

բ/ հայրենասիրության զգացմունքի դաստիարակում, աճող սերնդի մոտ հայրենիքի, ծննդավայրի նկատմամբ պատասխանատվության, նրան ծառայելու պատրաստակամություն և հավատարմություն,

գ/ հայրենիքի, ծննդավայրի պատմության և մշակույթի ուսումնասիրում,

դ/ հայրենիքի պաշտպանների հիշատակը հավերժացնելու հետ կապված միջոցառումների նախապատրաստման և անցկացման գործում մասնակցություն,

.հայկական բանակի լավագույն ավանդույթների մասին տեղեկատվության փոխանցում,

.սովորողների ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական զարգացման, առողջ կենսակերպի ձևավորում,

ե/ երիտասարդների զինծառայությանը պատրաստելու գործում ակտիվ մասնակցություն:

Առարկայական ուսուցիչների հետ համագործակցության արդյունքում անհրաժեշտ է միջառարկայական կապերի միջոցով ուսումնական նյութերը

մատուցել նաև մանկավարժական և հայրենասիրական խնդիրների լուծման տեսանկյունից: Ճակատամարտերը, պատերազմները, հերոսների, զորավարների կյանքի, գործունեության, նրանց հոգեբանական կերպարները դարձնել ավելի ներկայանալի:

Այն լի է օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական,

Օրինակ, անհրաժեշտ է հայոց պատմությունից հիշարժան իրադարձությունները՝ հերոսական պայքարի բազմաթիվ օրինակներով, որոնք դարեր շարունակ մշտապես մնացել են բազում սերնդների հիշողություններում, բարձր պահել նրանց մարտական ոգին, օտարերկրյա կեղեքիչների դեմ մղած ծանր պայքարում առաջադրել նորանոր հաղթանակների ձգտում: Կարևոր է, որպեսզի բարցրացվի ՆԶՊ դասընթացի վարկանիշը մեր դպրոցներում:

Զինղեկը առաջին դասից սկսած պետք է աշակերտների գիտակցությանը հասցնի ռազմագիտության կարևորությունը, ձևավորի զինվորական ծառայության համար անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու ներքին մոտիվացիա, պահանջմունք:

Զինղեկի գաղափարական համոզվածությունը, կարգապահությունը, համազգետի, շարժուձևի ձգվածությունը, ռազմական գործի իմացությունը, պահանջկոտությունը, արդարացի վերաբերմունքը, հոգատարությունը աշակերտների նկատմամբ դրական վերաբերմունքը, կստեղծեն առարկայի, զինվորական ծառայության, զինվորական գործի նկատմամբ անհրաժեշտ վստահություն:

Հայրենիքի պաշտպանությունը սեփական քաղաքացիների պարտականությունն է, քաղաքացիական, հայրենասիրական պարտքի կատարում:

Հայրենասիրական զգացմունքները, իրենց ձևավորման սկզբնական փուլում հանդես են գալիս որպես սեր հայրենի երկրի նկատմամբ: Հայրենասիրական դաստիարակության գործընթացը պետք է նպատակաուղղված լինի սովորողի, անձի գիտակցության զգացմունքների, վարքի ձևավորմանը: Հերոսամարտերի, ազգային հերոսների, հայոց պատմության, հաղթանակի էջերի, պատերազմի հերոսների մասին: Անհրաժեշտ է հերոսներին ներկայացնել նաև նրանց կյանքը, գործունեությունը նաև խաղաղ ժամանակաշրջանում, ներկայացնելով նրանց բարոյական, կամքի և հերոսական գործողությունների դրտապատճառները՝ դրանով իսկ ներգործելով երեխաների հուզակամային ոլորտի վրա:

Հայրենասիրությունը հասարակական գիտակցության բաղադրիչն է, որն արտահայտվում է խմբային զգացմունքներում, գնահատականներում, միջանձնային հարաբերություններում, անձի կենսակերպի, ազգի պատմության, մշակույթի, պետության և հիմնական արժեքների համակարգի մեջ: Հայրենասիրությունն արտահայտվում է մարդու արարքներում և գործունեությամբ, այն միշտ կոնկրետ է և

ուղղված է իրական օբյեկտներին, ձևավորվում է սեփական հայրենիքի նկատմամբ սիրո, պարտքի և պատասխանատվության զգացմունքների արդյունքում:

Հայրենասիրության դրսևորումները լինում են անհատական, խմբային և զանգվածային : Այն դրսևորվում է պետության, քաղաքացու ամենօրյա վարքում, նրա կենցաղում:

Հայրենասիրությունն ու քաղաքացիությունը իրենց մեջ ներառում են բարոյական զգացմունքների և վարքագծերի փոխկապակցված միասնությունը Հայրենիքի նկատմամբ սերը, քաղաքացիական կառույցների հետ հարաբերությունների օրինապահությունը, սեփական ազգի ավանդույթներին հետևելը, հայրենիքի պատմական հուշարձանների և սովորույթների նկատմամբ հոգատար վերաբերմունքը, կապվածությունը և սերը հարազատ վայրի նկատմամբ, հայրենիքի պատիվը և հեղինակությունը պահպանելու ձգտումը, այն պաշտպանելու պատրաստակամությունը և ընդունակությունը, մարտական խիզախությունը, այլ ազգերի մշակույթի և ավանդույթների նկատմամբ հարգանք, նրանց հետ համագործակցելու ձգտումը: «Ինչպես չկա մարդ առանց ինքնասիրության, այնպես էլ չկա մարդ առանց հայրենիքի»: Հայրենիքի նկատմամբ սերը, դաստիարակությունը տալիս է հուսալի բանալի դեպի մարդուն և հզոր հենարան նրա բնական, անձնային, ընտանեկան և ընդհանուր բարոյական հակումների դեմ պայքարի համար:

Հայրենասիրական դաստիարակության գործընթացը պետք է լինի պլանավորված, համակարգված, անընհատ և պետական քաղաքականության ծրագրերում դաստիրակչական գործունեության ոլորտում առաջնային ուղղություններից մեկը:

«Դպրոցականների հայրենասիրական դաստիարակության առաջատար դերը հայրենասիրության դաստիարկությունն է, որ սիրում է իր հայրենիքը, նվիրված է նրան, պատրաստ է իր աշխատանքով ծառայելու նրան ազատ էթնոմշակույթային միջավայրում և պաշտպանել նրա շահերը»:

Հայրենասիրական դաստիրակության գործընթացը պետք է լինի պլանավոված, համակարգված, պետական քաղաքականության ծրագրերում դաստիարակչական գործունեության ոլորտում առաջնային ուղղություններից մեկը: «Հայրենասիրական դաստիարակությունը կազմում է ժամանակակից գործընթացի անհրաժեշտ բաղադրիչի մասը: Այն անխախտելիորեն կապված է քաղաքացիական, բարոյական, աշխատանքային դաստիարակության հետ, ունի հարաբերական ինքնուրույնություն»:

Հայրենասիրական դաստիարակության խնդիր է ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որն ուղղված է զինծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ ձևի նկատմամբ պատրաստակամության ձևավորմանը:

Նորմատիվ-իրավական ապահովումը ենթադրում է օրենսդրական դաշտի, նորմատիվ բազայի կատարելագործում, հայրենասիրական դաստիարակության սոցիալ-իրավական հիմքերի սահմանում, կառավարության, գերատեսչության, կազմակերպության յուրաքանչյուր մարմնի դերի, տեղի, խնդիրների և գործառույթների հստակեցում, կրթության համակարգում հայրենասիրական դաստիարակության բազայի ստեղծում:

Մանկավարժական և մեթոդական ապահովումը ենթադրում է հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման հետ կապված ուսումնական և հատուկ ծրագրերի մեթոդիկաների մշակում, հայրենասիրական դաստիարակության մեթոդների և ձևերի զարգացում և կատարելագործում, ուսումնամեթոդական մշակումների արդյունքների ընդհանրացում և նորարարությունների մասին տեղեկատվության տրամադրում, գրականության ստեղծում՝ հաշվի առնելով նախ և առաջ հայրենասիրական և արտասահմանյան մանկավարժական փորձը, հումանիտար և դաստիարակչական ծրագրերի փորձաքննության անցկացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու.Ա.Սահակյան <<մանկավարժություն>> (ուսում.ձեռնարկ) 2004թ
2. Անդրեասյան Հ.Պ. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում: Երևան 1982 թ.
3. Այվազյան Ա. Մ. Հիմնատարրեր ազգային անվտանգության հայեցակարգի, 1-ին մաս: Երևան 2004 թ
4. Անդրեսյան Հ.ՊՆ ՌՀԴ-ի դաստիարակությունը դպրոցում Երևան 1982թ.
5. Բաբանսկի, Մանկավարժություն, Մաս 2, Երևան, 1987թ.,
6. Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ<<Մեծ հաղթանակի 60 - ամյակին նվիրված.. Գյումրի 2005թ.
7. Սարգսյան Հ.Պ.< Հայ զինվորի դաստիարակության համակարգի մանկավարժական հիմունքները Եր. Զանգակ- 97,2002թ

. .https://razmavaraget.wordpress.com

.http://www.mil.am